ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 04.12.2018թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան.
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան.
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից ներկայացրած համատեղ գործունեության պայմանագրի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշների առկայությունն ապահովում է «Մամբա» ՍՊԸ-ն (ոչ ՀՀ ռեզիդենտ):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ի (կոնսորցիում «Մամբա» ՍՊԸ) համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի սկանավորված տարբերակներն անընթեռնելի են, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և 06.12.2018թ. մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, և 12.12.2018թ. նիստը շարունակվել է: Սակայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որակավորման փաստաթղթերի գնահատման նիստում 06.12.2018թ. չի արձանագրվել հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3 կետով նախատեսված և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը, մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերում բացակայում են ներկայացրած նմանատիպ պայմանագրերի հաշիվ-ապրանքագրերը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 12.12.2018թ. մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Ծանուցումը մասնակցին ուղարկվել է էլեկտրոնային փոստի միջոցով, քանի որ Eauction համակարգը հնարավորություն չի տալիս նման դեպքերում մասնակիցներից պահանջել նախկինում չարձանագրված անհամապատասխանությունների շտկում: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, և 17.12.2018թ. նիստը շարունակվել է:

Քանի որ 30.11.2018թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՍՄՕԳՍՕՅՈՒՋ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 17.12.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/7» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Վ. Ասատրյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան